

5.10. 2006թ. հունիս ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հունիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության տարածքի մեծ մասում նորմայից բարձր է եղել 13.5-4.5 աստիճանով: Հատկապես բարձր ջերմաստիճան է գրանցվել I տասնօրյակում, երբ տասնօրյակային միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 4-6 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճան գրանցվել է Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ +32 +35°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +27 +29°C, ՀՀ Լոռու մարզում, Լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում՝ +24 +28°C:

Առավելագույն ջերմաստիճան գրանցվել է Արարատյան դաշտում՝ +34 +38°C, Սյունիքի հովիտներում՝ +32 +35°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +27 +32°C, ՀՀ Լոռու մարզում, Լեռնային շրջաններում, Սյունիքի նախալեռներում՝ +24 +29°C: Գրանցված առավելագույն ջերմաստիճաններն առանձին օրերին, առանձին վայրերում գերազանցել են տվյալ օրվա երբևէ գրանցված բացարձակ առավելագույն ջերմաստիճանները:

Միջին նվազագույն ջերմաստիճանը Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում կազմել է +7 +13°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +13 +17°C, Սյունիքի նախալեռներում՝ +12 +14°C, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ +16 +20°C:

Ամսվա ամենացածր ջերմաստիճանը դիտվել է 9-11-ին, երբ Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է +2 +11°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Տավուշի մարզում՝ +8 +15°C, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ +13 +16°C:

Ամսական տեղումների քանակը հանրապետությունում խիստ ցածր է եղել նորմայից: Արարատյան դաշտում այն կազմել է նորմայի 52-83%-ը (ք.Արտաշատում /ՀՀ Արարատի մարզ/ 172%-ը), ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում՝ 6-20%-ը (ք.Մեղրիում /ՀՀ Սյունիքի մարզ/ 0%), ՀՀ Լոռու մարզում՝ 24-39%-ը, Լեռնային շրջաններում՝ 48-55%-ը (ք.Գավառում /ՀՀ Գեղարքունիքի մարզ/ 85%, ք.Գյումրիում /ՀՀ Շիրակի մարզ/ 130%-ը):

I և II տասնօրյակներում դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ, III տասնօրյակում՝ առանձին շրջաններում անձրև և ամպրոպ:

Ք.Երևանում առանձին օրերին դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 15-20 մ/վրկ, պռթկումները՝ 20-24 մ/վրկ: Հունիսի 2-ին ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ), 7-ին և 22-ին՝ ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), 22-ին՝ ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), 26-ին՝ ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ), 30-ին՝ Ուրցաձոր գյուղում (ՀՀ Արարատի մարզ), Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 14-20 մ/վրկ, պռթկումները՝ 15-22 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 50-70%-ը:

Սևանա լճի մակարդակը մայիս ամսվա համեմատ իջել է 1 սմ-ով և 2006թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել 1898.58 մ, որը 2005թ. նույն օրվա համեմատ բարձր է 27 սմ-ով: